ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0212.01.5 <<ԴԻԶԱՅՆ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0212.01.01.5 «ԴԻԶԱՅՆԵՐ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության 0212.01.5 <<Դիզայն>> մասնագիտության 0212.01.01.5 «Դիզայներ» որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների «տեսակների և մասնագիտական պարտականությունների:

2. Միջին մասնագիտական կրթության 0212.01.5 <<Դիզայն>> մասնագիտությամբ 0212.01.01.5 «Դիզայներ» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքը(ները)՝
   1) նախագծային կենտրոններում և արտադրությունում դիզայների օգնական, տեխնիկ,
   2) գրաֆիկական համակարգչային կենտրոններում և ծառայություններում դիզայներ-օպերատոր,
   3) գովազդային կենտրոններում գրաֆիկական էլեմենտների մոնտաժող դիզայներ,
   4) դիզայն մասնագիտական լաբորատորիաներում փորձնական կատարող,
   5) անհատական ձեռնարկություններում արտադրությանը աջակցող դիզայներ,
   6) գրաֆիկական աշխատանքների հեղինակային կատարող,
   7) հրատարակչական կենտրոններում տեխնիկ-կատարող,
   8) գեղագրական կենտրոններում նկարիչ-դիզայներ,
   9) քաղաքային և կենցաղսպասարկման ոլորտներում դիզայներ-ոճաբան,
   10) լուսանկարչական տաղավարներում լուսանկարչի օգնական:

3. Միջին մասնագիտական կրթության 0212.01.5 <<Դիզայն>> մասնագիտությամբ 0212.01.01.5 «Դիզայներ» որակավորմամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.
   1) դիզայն-նախագծային գործընթացի իրականացում,
   2) նախագծային պահանջներից ելնող փաստաթղթային փաթեթի ստեղծում՝ գունագրաֆիկական տախտակների մշակում, նախագծի տեսական մասի բացատրագրի ձևակերպում, նախագծի աշխատանքային մանրակերտի կամ մոդելի ստեղծում,
   3) գրաֆիկական ֆիրմային ոճի տարրերի նախագծում և իրականացում,
   4) գովազդային պաստառների և գրաֆիկական այլ տարրերի նախագծում,
   5) դիզայնի տարբեր ոլորտների նախագծային հիմնախնդիրների բացահայտում,
   6) մանրակերտի պատրաստման տեխնոլոգիական հնարքների տիրապետում,
   7) մասնագիտական լաբորատորիաներում պրոֆեսիոնալ գիտելիքների կիրառման տիրապետում,

8) հրատարակչական կենտրոններում դիզայն առաջարկների հեղինակային հսկողության իրականացում
9) դիզայն լաբորատորիաներում և ստեղծագործական արվեստանոցներում առկա խնդիրների պարզաբանում,
10) դիզայն լրատվության ճիշտ և արդյունավետ կիրառում,
11) դիզայն լուսանկարչական հմտությունների պրոֆեսիոնալ կատարում,
12) նախագծվող օբյեկտների գաբարիտային և աշխատանքային գծագրերի կատարում,
13) համակարգչային տեխնոլոգիաների կիրառում դիզայն նախագծերում,
14) նախագծային գործընթացում դիզայնի հարցադրումներով սպառողական և ֆունկցիոնալ վերլուծությունների իրականացում,
15) նախագծային մտքի փնտրողական և ավարտուն էսքիզների կատարում,
16) նախագծային մտքի փնտրողական և ավարտուն էսքիզների կատարում,
17) հարակից մասնագետների հետ խմբային-նախագծային աշխատանքների իրականացում
18) ավարտված մտքի ներդրման գործընթացում հեղինակային հսկողության իրականացում: